ՀՏԴ 82.09 Գրականություն

ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆԻ ԽՈՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Զուխրա ԵՐՎԱՆԴՅԱՆ

Բանալի բառեր՝ *հոգեժառանգ, հիմնորոշ, գեղագիտական, կարգախոսներ, ազգային կերպար, անխաթար, արժեհամակարգ, հետնահանջ:*

Ключевые слова *- духовный наследник, основополагающий, эстетический, слоганы, национальный образ, неискаженный, система ценностей, отступление.*

Key words *- spiritual heir, fundamental, aesthetic, slogans, national image, undistorted, value system, retreat.*

РОДИНА И НАЦИОНАЛЬНЫЙ ОБРАЗ В ЭССЕЯХ ГРИГОРА ГУРЗАДЯНА

З. ЕРВАНДЯН

Гурзадян в основе тематического мировоззренческого развития своих эссе отделил значительное место эстетическому изображению родины и основополагающему принципу отображения национального образа. Для представления и оживления национального образа в эстетической системе Гурзадян сделал художественным ту среду, где отображены нравственные представления народа.

Взгляды писателя, рожденные от национальной среды и неискаженного восприятия национального образа, являются уроками регулирования общественного поведения.

HOMELAND AND NATIONAL IMAGE IN GRIGOR GURZADYAN'S ESSAYS

Z. YERVANDYAN

In the basis of thematic and ideological development of his essays Gurzadyan gave substantial place to aesthetic depiction of motherland and fundamental principle of national image reflection. For national image description and reviving in the aesthetic system, Gurzadyan made artistic the environment, where people's moral conceptions are presented.

Opinions coming from writer's national environment and national image undistorted perception are lessons regulating social behavior.

Գուրզադյանն իր էսսեների թեմատիկ-աշխարհայացքային զարգացման հենքում ծանրակշիռ տեղ է հատկացրել հայրենիքի գեղագիտական կերպարավորմանն ու ազգային կերպարի մատուցման հիմնորոշ սկզբունքին: Ազգային կերպարը գեղագիտական համակարգում կենսավորելու և մատուցելու համար Գուրզադյանը գեղարվեստականացրել է այն միջավայրը, որտեղ արտացոլվում են ժողովրդի բարոյական պատկերացումները:

Գրողի՝ ազգային միջավայրի և ազգային կերպարի անխաթար ընկալումից ծնված հայեցումները հանրային վարքի կարգավորման դասեր են:

Խորն է Գրիգոր Գուրզադյանի խոհափիլիսոփայության մարդկային և հասարակական բովանդակությունը: Ընդհանրական, համամարդկային մեծ ձգտումների տեր գիտնականի հսկայածավալ հայեցումների այդ աշխարհում, սակայն, միշտ գերակա է մի մտածում, որի կիզակետը հայ մարդու համար հավերժող անփոփոխականն է, նրա մտածողության նախագաղափարի մարմնացումը՝ հայրենիքը, քանի որ, ինչպես ինքն է ձևակերպում իր հավատամքը, «….չկա, չի կարող լինել ավելի վեհ նպատակ, քան հայրենասիրությունն է»[1]:

Հայտնի է. հասարակական հարաբերությունների համապատկերում կենսական իրականությունից վերելած գաղափարներն ու գոյավորված ուսմունքներն են հենց ձևավորում ժողովուրդների դավանած արժեքների համակարգերը: Իսկ հայ ժողովրդի հոգևոր արժեքները գլխավորող կողմնորոշիչը, անվերապահորեն, ամենից առաջ և ամենից վեր իր հայրենիքն է. այն ճշմարիտ հայրենասերի աշխարհընկալման, վարքագծի ու դավանանքի հիմնարար ուղենիշն է. դրանով ոչ միայն կենսաձև է ճշտորոշվում, այլև պայմանավորվում են վարքաբանական տարաբնույթ դրսևորումներ ինչպես անձնային, այնպես էլ ազգային կյանքում:

[1] **Գր. Գուրզադյան,** Մի սիրո պատմություն, §Զանգակ-97¦ հրտ, Եր., 2004, էջ 37:

Խոհագրող Գուրզադյանը՝ որպես իր ստեղծագործության առանցքը կազմող հայրենապաշտության գաղափարի կրողն ու արտահայտիչը, բոլոր այն գործերում, որոնց ստեղծագործական պաթոսը հայրենիքի նկատմամբ տածած մեծ սերն է, մշտապես արթուն է պահում հայ մարդու ազգային երազանքի իրականացման ձգտումը: Լինելով հմուտ խոսքասաց, ճարտարախոս պատմող՝ նա կարողանում է իր ստեղծած գեղագիտական աշխարհում անխաթար ապահովել հայրենիքի և ազգայինի ներկայությունը: Մեզ «հայ հողին» հետ պսակող (Թորոս Թորանյան)[1] խոհագրողի ստեղծագործությունների առանձնակի արժեքը պետք է համարել այդ հատկանիշը՝ անկախ դրանց հետազոտության թելադրած թեմատիկ պահանջներից և դրանք քննության առնելու դիրքորոշումից, քանի որ այդ առանձնահատկությունը նրա ստեղծած գրականության գեղագիտական ազդեցությունն ու տպավորությունը ապահովող կարևոր գործոններից է:

Անգամ եթե խոհագրության թեման մեր նեղազգայինի կամ ժողովրդի վերաբերյալ չէ, այլ անդրադարձ է մարդկային պատմության բախտորոշ որևէ իրադարձության, միևնույն է, մեծ մտածողը մեզ տողամիջյան ընթերցումների է մղում, և շատ հաճախ ենք դեպքերն ու դեմքերը, իրադարձություններն ու իրողությունները զուգահեռում մեզ ու մերինի հետ, քանի որ պատումների ենթաշերտերում մշտառկա է հեղինակի գերակա մտածումի անփոփոխականը:

Այն գեղարվեստական գունեղ միջավայրը, որտեղ Գուրզադյան խոհագրողը տեսանելի է դարձնում հայրենի երկրի քար ու քարափը, ձորերն ու կիրճերը, խենթացնող գուներով ժայռ ու լեռների քարափեշերը, լսելի դարձնում բնության տարաձայն համանվագը, ներկայանում է որպես անբաժան մասը մեծ անսահմանի և տիեզերական սքանչելի ներդաշնակության: Նույնպիսի գունեղությամբ է գրողը կերտում տիեզերական այդ ներդաշնակությունը իրենց հանճարեղ խոսքով կամ վրձնով կերպավորող հայոց մեծերի կերպարները: Գեղագիտական այս առանձնաշնորհներով հարուստ գործեր են **«Կաքավաբերդի առեղծվածը», «Անի… Կուսանաց վանք», «Կարմրավոր… Կատարելություն հարմոնիայի…», «Խծկոնքի հրաշքը», «Պտղնու կամարը… Հմայքն ավերակի…», «Չարենց», «Սարոյանական տիեզերքը», «Կալենց… Մտորումներ ցուցահանդեսից», «Խրախճա՛նք գույների», «Մինաս»** էսսեները, որոնք հեղինակի փիլիսոփայական հայեցումների, մշակութային դիտանկյուններով վերլուծությունների, հետազոտական փաստարկումներով հարուստ դիտարկումների և խորիմաստ դատումների ինքնատիպ խտացումներն են:

Գրական հանգանակի դեր կատարող այս խոհագրությունների գեղագիտական առանցքը հայրենիքի հոգևոր և մշակութային հարստության, նրանց ներպահած պատմական հիշողությունների պահպանման գաղափարն է, որը տարբեր թեմաներով ծավալվող պատումներում վերածվում է անվերապահ արժեքի, դառնում հավատամքի հիմք, օգնում՝ պաշտպանվելու հոգևոր նահանջի աղետներից:

Հայրենիքի հոգևոր և մշակութային հարստությունը արարող-կերտող գուրզադյանական հերոսները նրա գեղագիտական աշխարհի գունապնակը մեծապես հարստացնող մարդ-խորհրդանիշներ են, իր բնորշումով՝ մարդ-իրադարձություններ, որոնց առանձնաշնորհը մարդկային և հասարակական բարոյականության բարձր արժեքներ կրելն է: Ա. Էյնշտեյնն է ասել. «Մարդկային բոլոր արժանիքների հիմքում բարոյական սկիզբն է»: Հարկավ, *բարոյական սկիզբն* է արմատը, որից գոյավորվում, կյանք է առնում ամենայն մարդկայինը: Գուրզադյանի կերպավորած հերոսները, այդ թվում՝ հայ մեծերը, այդ ամենայն մարդկայինի լավագույն դրսևորումների կրողներն են:

Գուրզադյանի հայեցմամբ՝ ցանկացած շեղում *բարոյական սկզբից* առաջացնում է կենսահաստատ ներդաշնակության եղծում, մարդու կոչման գիտակցումի խեղում և, բնականաբար, այդ ամենին հետևում են արժեհամակարգային անվերականգնելի կորուստները:

[1] **Գր. Գուրզադյան,** Կաքավաբերդի առեղծվածը, §Ապոլոն¦ հրտ, Եր., 1998, էջ 343:

Անհանգստությունը, որ կարող է հայ մարդը հեռանալ իր ***սկզբից***, օտարվել դարերով դավանած իր բարոյական արժեքավոր սկզբունքներից, Գուրզադյանը արտահայտում է բազմիցս՝ ստեղծելով տարբեր առիթներ: Հարկ է նշել, որ այդ անհանգստությունը միայն ազգային ավանդապահական ջիղի աչքառու հետնահանջի ըմբռնումից չէր միայն խմորվում, այլև մարդկային բարոյականության ավելի խորքային ու բազմակողմանի ընկալումներից: Կյանքի այն բարոյական սկզբունքները, որոնցով պայմանավորված է եղել գրողի դավանանքը, բարոյագեղագիտական այն վեհ իդեալը, որի համար պայքարել է նա իր ողջ կյանքում, բխել են ժողովրդական բարոյախոսության ազգամշակութային նշանակությունը խորապես գիտակցելու և արժանվույնս գնահատելու նրա առանձնակի կարողությունից:

Հայ ժողովուրդը հազարամյակներով մշակութային արժեքների է վերածել իր թե՛ բարոյական, թե՛ հոգևոր ձեռքբերումներն ու հաղթանակները և արքետիպերի վերածել դրանք կռող ու պատմության հիմերը կերտող հերոսներին (Հայկ Նահապետ, Արա Գեղեցիկ, Տիգրան Մեծ, Մեսրոպ Մաշտոց, Գրիգոր Նարեկացի, Սասունցի Դավիթ…): Դրանցով է ձևավորել մշակութաաշխարհայացքային ինքնատիպությամբ առանձնացող մեր ազգային հավաքականությունը՝ իր կենսահաստատ համոզմունքներով և ավանդական բարոյականությամբ: Գուրզադյանը ժողովրդի ավանդական բարոյականության՝ պետական մակարդակով, պետության նախանձախնդրությամբ պահպանման ջատագովներից էր: Հռոմի կայսր մեծն Օգոստոսի պալատականներից մեկի՝ Մարկ Ագրիպպայի մասին խոսելիս խոհագրողը շեշտում է, որ նա «առաջին նախարարն էր ու տնօրինում էր այսպես կոչված պետական ողջամտության հարցերը», և անմիջապես կատարում հեղինակային միջարկում՝ «Ինչպես է, որ մեզ մոտ մինչև հիմա չկա այդքա՛ն կարևոր այս նախարարությունը…»[1]:

Փակագծված ասելիքն ավելի քան խոսուն է: Գիտնական գրողին միշտ հուզել են հայ ժողովրդի ինչպես պատմական ճակատագրի, այնպես էլ իր ապրած ժամանակների սոցիալ-քաղաքական, հասարակական կնճռոտ հարցերի լուծման խնդիրները: Նրա աներկբա համոզմունքը կարգախոսային հնչումով է. ազգը պետք է բարելավի իր բնական կեցության պայմանները, հաստատի իր՝ որպես անկրկնելի տեսակի լինելիության իրավունքը: Թերևս այս հայեցումից են սկիզբ առնում ճակատագրորեն կարևորվող պատմական որոշ իրադարձությունների մասին հեղինակի՝ դիտարկումներով հարուստ պատմությունները, որոնք խոհագրությունների առանցքային թեմաներից են: Դրանք հետաքրքիր գեղարվեստական անդրադարձումներ են, որոնք ընթերցողին մղում են անցյալի իրադարձությունները արդիականության դիտանկյունով տեսնելու և իրօրյա հարցերի պատասխանները փնտրելու: Խոհագրողը տեսնում էր նաև սաղմերը պատմականորեն գոյավորվող այն փաստերի, որ կենսականորեն տիպական են դառնալու հետագայում զարգացող իրադարձությունների ընթացքում, մոտիկ ապագայում:

Գուրզադյանն իր խոհերով, դիտարկում-վերլուծություններով անընդհատ ուղեկցում է ընթերցողին: Մեծ մտածողի այդ պատկառազդու ներկայությունը խոհագրություններում, նրա մշտառկա կերպարը կենսական հզոր լիցքեր են հաղորդում պատումներին՝ առավել զգալի դարձնելով նրա՝ հայրենիքի և հայ մարդու գեղագիտական իդեալի գեղեցկությունն ու վեհությունը:

Գուրզադյանական ամեն մի ասելիքից անձնվեր հայրենասիրության, ազգասիրության և մարդամեծարման դասեր կարելի է քաղել: Եվ ընդհանրապես հանրային վարքի կարգավորման դասեր կարելի է համարել ինչպես ազգային միջավայրի, այնպես էլ ազգային կերպարի անխաթար ընկալումից ծնված նրա բոլոր հայեցումները: Պակաս ուսանելի չեն հույզերի ու ապրումների խտացումից ծնված խոհերն ու մտորումները՝ կապված հայրենյաց արժեքների պահպանման խնդիրների, դրանց եղծման շուրջ առաջացած մտահոգությունների հետ: Այդ

[1] Նույն տեղում, էջ 83:

մտահոգությունները հայրենիքին անմնացորդ նվիրվածությամբ կապված գիտնականն արտահայտում է մեծ մասամբ բացեիբաց, երբեմն էլ բառերի, տողերի արանքում թաքնված մտքերով:

Գուրզադյանի մտահոգությունն անկեղծ է ու ազնիվ. հայ մարդու հոգեբանության մեջ նկատվող ոգեղեն որակների որոշակի փոփոխությունները, նրա մեջ արմատավորվող անտարբերությունը, իհարկե, չէին կարող չանհանգստացնել մեծ գիտնականին. նա քաջ գիտակցում էր, որ այդ հոգևոր աղետները կարող են տանել դեպի համազգային դիտողականության անկում, նկարագրի ձևախեղումներ և, ի վերջո, դեպի ազգային արժեքներից նահանջ: Նա ինքնակերպ է արտահայտում իր խոռվքը. այն ավելի շատ նախատինքի է նման. «Կարմրավորով կարելի է ճաշակ կրթել… Բարձր ճաշակի չափանիշը տարիք չունի ու չի հնանում… Պարզվում է, սակայն, որ բարձր ճաշակի չափանիշ փնտրելու համար հարկ չկար նետվել այդքա՛ն հեռու՝ հեռավոր ժամանակների Եգիպտոս, Հին Հունաստան, Հին Հռոմ… Այդ չափանիշը՝ Կարմրավորը, այստեղ է՝ մեր հողի վրա, մեր աչքի առաջ, ու չենք տեսնում, չենք հասկանում… Կարմրավորի առաջ պիտի կարմրել մեր արածի ու չարածի համար…»[1]:

Հայրենի մշակութային հարստության փառերգման գուրզադյանական գաղափարախոսությունը իր փիլիսոփայական ելակետով և հասարակական նպատակներով ծառայում է մեր ազգային արժեհամակարգում կարևոր դեր ունեցող որոշ կողմնորոշիչների հետնահանջի դեմն առնելու, չարժեքների ներթափանցումներից պաշտպանելու և հնարավորինս ազգայինի մաքրամաքուր ակունքների պահպանմանն ու զորացմանը: Նման նպատակադրումով ազգային կերպարի մատուցման հիմնորոշ սկզբունքի անպակաս ներկայությունը Գուրզադյանի գեղագիտական աշխարհում այն վերածում է յուրօրինակ ազգային ինքնաճանաչման դպրոցի:

Իր ժողովրդի ճակատագրի, նրա ապագայի համար ցավագնորեն մտահոգվող գրողը չէր կարող իր արձակի թեմատիկ-աշխարհայացքային զարգացման հենքում ծանրակշիռ տեղ չհատկացնել ազգային կերպարի մատուցման հիմնորոշ սկզբունքին: Ազգային կերպարը գեղագիտական համակարգում կենսավորելու և մատուցելու համար կարևոր նախապայման է այն բնական միջավայրի գեղարվեստականացումը, որտեղ լավագույնս արտացոլում են ժողովրդի բարոյական պատկերացումները, ներկայացվում նրա դավանած այն կարգախոսները, որոնք ունեն գաղափարախոսական գործառույթներ:

Գիտնական խոհագրողը՝ որպես շատ հեռավոր անցյալից եկող իր ժողովրդի հավաքական բարոյականության լավագույն հատկանիշների կրողն ու նրա կենսագրության հոգեժառանգը, անասելի խոր ցավ էր ապրում, երբ տեսնում էր, թե ինչպես է ժողովրդի մի ստվար հատվածն ինքն իրեն օտարում իր իսկ գոյից: Կարգախոսները, որոնք խորհրդայնացված տարիներին գաղափարախոսական գործառույթներ ունեին, շատ կարճ ժամանակում իմաստազրկվել էին և կորցրել իրենց բարոյահոգեբանական ներգործության բոլոր լծակները: Իսկ ցանկացած ժողովրդի բարոյական պատկերացումները ուղիղ համեմատականորեն արտացոլումն են այն բնական միջավայրի, որտեղ ձևավորվում ու կենսականացվում են: Պետք է ասել, որ ժողովրդի բարոյահոգեբանական կացության, նրա դավանանքային ու բարոյական պատկերացումների խորաշերտային ընկալումներն ու անկողմնակալ գնահատումները իրական տաղանդին մեծապես օգնում են ազգային կերպարի մատուցման նորանոր կերպեր գտնելու ու պատշաճորեն ներկայացնելու հանրությանն ու ժամանակին: Իր ժողովրդի ինքնության պատմության խորագիտակ Գուրզադյանն էլ ի՛ր կերպն է հաստատել. նա արարչամիտ հայ մարդու ստեղծած մշակութային գլուխգործոցների կերպարավորումով, ինքնատիպ մեկնաբանություններով և վերլուծություններով է վերհանել նրա ազգային կերպարի կոթողայնությունը, նրա որդեգրած բարոյախոսության շիտակությունը:

[1] **Գր. Գուրզադյան,** Մի սիրո պատմություն, էջ 161:

Խոհագրությունների պատումներում, հընթացս ազգային կերպարի գուրզադյանական մատուցման կերպի ընկալումների, ընթերցողը կատարում է նաև գրողի կենսափիլիսոփայության, նրա խոհերի և հույզերի նորանոր բացահայտումներ: Պատումների իմաստասիրական ենթաշերտերից վերհանվող կենսական լիցքերն ու խտացումները, հեղինակային ապրումների հայեցական պատկերումները, այս կամ այն գաղափարի ազգաբանական բովանդակության վերհանումները ստեղծում են մեծարվեստ գեղագիտական մի համակարգ, որը ոչ միայն եզակի է իր ինքնակերպությամբ, այլև ազգամշակութային հենց իրօրյա և գալիք օրվա անգնահատելի նշանակությամբ:

Մտածելը մարդու էությունը, նրա իսկական արժեքը[1] համարող գրողը սերնդի ապագա ունենալ-չունենալը կապում է ազգային անուրանալի արժեքներից ամենամեծի՝ դպրոցի հետ («Երեխան, որի դպրոցական կյանքն ինչ-ինչ պատճառներով չի ստացվել, ներեցեք դաժանությանս, ապագա չունի… ….Կան արժեքներ, որոնց մասին մենք չպիտի մոռանանք երբեք: Այդ արժեքներից ամենամեծը դպրոցն է…»[2]): Մեջբերենք խտամտքի վերածված գուրզադյանական մի խոսք ևս՝ ցույց տալու, թե ինչչափով է կրթության դերը կարևորում մեծ մտածողը. «….Կեսարը կդառնա՞ր Կեսար, եթե չլիներ այդքա՛ն կրթված ու այդքա՛ն զարգացած…»[3]:

Առանձնակի շեշտելի են Գուրզադյանի հայեցումները ազգային լեզվի դերի ու նշանակության վերաբերյալ. հապա՝ «Ես ներքին կապ եմ տեսնում լեզվի նկատմամբ ունեցած վերաբերմունքի և ժողովրդի ինտելեկտի, նաև, ինչու չէ, պետության հզորության միջև»[4]: Իր ժողովրդի հավաքական իմաստնությունը կրող խոհագրողը չէր կարող արժանվույնս չգնահատել նրա լինելիության հզոր պատվարներից մեկը՝ «բացառի՞կ, ապշեցուցիչ երևույթը»[*]՝ հայերենը: Մեր լեզվի գնահատումները ի մի բերողները, հաստատ, հատորներ կկազմեն. տեղի տալով գայթակղությանը՝ բերենք գնահատում-բնութագրման ևս մի օրինակ, այս դեպքում՝ Հրանտ Մաթևոսյանից. «Մեր լինելության, գոյության անժխտելի պայմանն է լեզուն: Աշխարհի քարտեզի վրա ու երկրի հսկա տարածքում գրված իրենց մի պստիկ տեղը, դարերի ճակատին գրած հայ ու Հայաստան անունը այս փոքրիկ հողն ու ժողովուրդը նվաճել են լեզվով: Լեզուն ապրելու ձև է, լեզուն աշխարհ է, սնունդ ու պայքարի միջոց, ինքնարտահայտման ու ինքնադրսևորման եղանակ…»: Հարցազրույցի հեղինակի հարցին՝ ի՞նչ է լեզուն Ձեզ համար, հաջորդում է պատասխանը. «Լեզուն հայրենիք է»[5]:

Առանձնակի էր Գրիգոր Գուրզադյանի սերը հայոց լեզվի հանդեպ: Անչափելի մտածավալումների, յուրատիպ ներտեսողության տեր աստղագետ-խոհագրողը մեծ հավատավորի ակնածանքով ու անկեղծ հիացմունքով է գրում. «Ժողովրդի մեծագույն սրբությունն իր լեզուն է, պետք է սիրել, պետք է ծնկաչոք խնկարկել այդ սրբությունը»[6]. այս, իրոք, խորապես գիտակցված պաշտամունքի անթաքույց հորդում է:

Գուրզադյանի խոհագրական գրականության գեղագիտական համակարգում իրենց նշանակալից դերն ունեցող դիտարկումները, որոնք վերաբերում են մայրենի լեզվին, ազգային դպրոցին, պայմանավորված են նրա՝ ազգային հիմնարար արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքով և դրանց հետ կապված կենսաերևույթների գաղափարական գնահատականով: Ահավասիկ գաղափարական գնահատական-հայեցումներ, որոնք ազգային

---

[1] **Գր. Գուրզադյան,** Կոսմիկական կատաստրոֆա, §Զանգակ-97¦ հրտ., Եր., 2004, էջ 346:
[2] Նույն տեղում, էջ 344-345:
[3] **Գր. Գուրզադյան,** Կաքավաբերդի առեղծվածը, էջ 53:
[4] **Գր. Գուրզադյան,** Կոսմիկական կատաստրոֆա, էջ 348:
[*] *Նիկողայոս Մառի բնորոշումն է:*
[5] «Հայություն», թիվ 1996 թ.:
[6] **Գր. Գուրզադյան,** Տիեզերքը ափի մեջ, §Զանգակ-97¦ հրտ., Եր., 2005, էջ 251:

գաղափարախոսության հիմնարար սկզբունքներ են թելադրում-պարտադրում. «…Չի կարելի լինել հայրենասեր առանց գիտենալու մայրենի լեզուն, հայրենի բնաշխարհն ու հայրենի երկրի պատմությունը: Այո՛, նաև հայրենի բնաշխարհն ու բնությունը. չսիրել բնությունն ընդհանրապես, իհարկե դժբախտություն է. այդպիսի մարդը կարեկցանքի է արժանի…»[1]:

Հայտնի է, որ գրողի գաղափարները լավագույնս արտահայտող, նրա կերպարի բնութագիրն ամբողջացնող միջոցներից է բնանկարը. գրող-բնություն, բնություն- գրող շղթան անքակտելի է: Գուրզադյանի մտահոգությունը՝ որպես բնապաշտության և ազգային ինքնագիտակցման դրսևորում, սերտ առնչվում է **«Կարմրավոր…Կատարելություն հարմոնիայի»** խոհագրության հիմնադրույթներին: Իր տեսահայացի ընդգրկուն դաշտում պատկերելով Կարմրավորը՝ որպես ազգային ստեղծագործ ոգու մարմնավորում, և պանծացնելով նրա կոթողայնությունը՝ նա հետամուտ է ապահովելու մեր ժողովրդի հատկանշվող ինքնությունը, որը և է նրա հարատևելու նախապայմանը: Այդպիսով գրողը սերնդին մղում է արարման, սերմանում ժամանակի համահարթեցումից խուսափելու և ազգային ոգու էությունը անխաթար պահելու ձգտումը: Ահա ինչպես է իր անառարկելի համոզմունքը բանաձևում խոհագրողը. «Ազգ լինելու, ժողովուրդ լինելու, պետություն լինելու պայմանը դա է՝ կառչած մնալ մայր հողին: Եթե անգամ այն քարակույտ է ծայրից ծայր…»[2]: Գրողի դիտողականությունից ծնված գեղագիտական այս միտքը իր ազգապահպան էությամբ ամենաարդիական բանաձևումներից կարելի է համարել: Հայրենասիրական այս գաղափարաբանության ազգաբանական բովանդակությունը յուրաքանչյուր հայ ընկալում է իր մեջ արմատավորված պատկերացումների ոսպնյակով: Պաշտամունքի հասնող հայրենասիրությունն ու հայրենի հողի համար զոհվելու պատրաստակամությունը դարեր շարունակ պայմանավորել են հայ ժողովրդի՝ կյանքի որոշակի որակներ ունեցող գոյաձևի ընտրությունը: Հայրենապաշտության կերպարավորված գաղափարը նույնպես մեր ազգային հավաքական մտածողության հարատևող արքետիպերից է, որը ոչ միայն կենսակերպ թելադրող, այլև բարձրագույն հոգևոր արժեք է: Թերևս մեր ազգային լինելության կարևոր կռվաններից մեկն էլ այս անփոփոխականի գեղագիտական արժևորումն է բոլոր ժամանակներում:

Պետք է արժանին մատուցել գեղարվեստական գրականությանը ազգային արքետիպերի բարոյահոգեբանական ներգործությունների դերը հզորացնելու, նրանց ազգամշակութային նշանակությունը հատկանշելու համար: Չէ՞ որ ազգը գնահատող կարծրատիպերը հաճախ այնքան ներշնչողական են լինում, որ կարող են ազդել նրա անդամների հոգեբնկալումների վրա, վերածվել նաև անհատական ինքնագնահատականի, թելադրել վարքականոն, պայմանավորել գոյակերպ: Ընդհանրապես ցանկացած ազգի մասին եղած հավաքական պատկերացումը կարող է ինչպես հերոսականցնող կենարարությամբ առանձնակիացնել նրան, այնպես էլ աղետաբեր լինել տևականորեն և ստիպել ճշտորոշելու վարվելակերպի չափանիշներ ու ձևավորել համապատասխան հասարակական պահելաձև:

Մեր գրականության մշակների ստեղծած գեղագիտական աշխարհի հմայքը թերևս այն է, որ նրանում իրենց ընդգծված արտացոլումն են գտել հայ մարդու՝ դարերով ձևավորված բնավորության ինքնատիպ գծերը՝ լույս ու լուսավորի, խաղաղ կյանքի մշտական երազանքը, ազատության ձգտումը, մարդասիրությունը, աննկարագրելի տոկունությունն ու առասպելական դիմացկունությունը: Ազգային տեսակն առանձնավորող այս գծերով ամբողջանում են արժեհամակարգային հատկանիշներ, որոնք էլ ապահովում են հայրենի հողի ու մարդու նախաստեղծ կապն ու միշտ արթուն և զգոն պահում պատմական հիշողությունը:

---

[1] **Գր. Գուրզադյան,** Էսսեներ, հարցազրույցներ, , §Զանգակ¦ հրտ., Եր., 2012, էջ 40:

[2] **Գր. Գուրզադյան,** Կաքավաբերդի առեղծվածը, էջ 105:

Հարկ է շեշտել, որ Գրիգոր Գուրզադյանը առանձնակի է գնահատում ազգայինի ներկայությունը անհատի ներաշխարհում: Կյանքի բազմաբնույթ երևույթները մարդու մեջ առաջացնում են գիտակցական վերաբերմունք ամենայն կենսականի նկատմամբ, իսկ երբ ամենայնից առանձնացվում են ազգային բարոյականությանը հատուկ արժեհամակարգային կռվանները, հանուն որոնց և որոնց համար անհատը կշեռքի վրա է դնում նույնիսկ իր կյանքը, սա արդեն ավելին է, քան կարող է թելադրել մահկանացուի գիտակցությունը. սա, հավանաբար, մարդու մեջ անդին ժամանակներից բնկալած ազգապահպանության այն գաղափարն է, որը մեզանում հարատևում է իբրև մտածողության արքետիպ: Այս նախագաղափարն իր ազգաբանական բովանդակությամբ հայեցման նյութ է եղել դեռևս առասպելներից սկսած: Այն միայն հայրենանվիրության գոյավորողը չէ, այն նաև հույս ու հավատի սերմանողն է մեզանում, ինչպիսինը, օրինակ, «Ագռավաքարի» դռների՝ մի օր բացվելու գաղափարն է, որի անհատականացումով էլ հենց արտահայտվում է երևույթի տիպական բովանդակությունը:

Գուրզադյանական հավատո հանգանակը ներկայացնող գեղագիտական աշխարհից քաղված դասերից շեշտենք ևս մեկը. այն է որ՝ մեր ազգային ավանդական բարոյականության հիմերն ամրացնելու կարևոր խնդիրներից մեկը անվերապահորեն պետք է դարձնել բոլոր ժամանակների մեր ազգային հոգևոր ձեռքբերումները մշակութային արժեքի վերածելու օրապահանջը, քանի որ ներաշխարհային՝ հոգեբանական-բարոյական տեղաշարժը, որ սկիզբ է առնում մշակութային արժեքի ներգործուն ազդակներից, անգնահատելի դեր ունի ազգային կյանքում: Այդպիսով կկարողանանք նաև մեր մեծերի միջոցով գեղարվեստական իրողությունների վերածված կենսահաստատ հանոզմունքներով նայել ապագային՝ ձերբազատվելով ժամանակակից աշխարհում մեզ հետընթացի մղող հոռետեսությունից:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Զուխրա Երվանդյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ
Էլփոստ՝ zyervandyan@yahoo.com

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը: